70. ԽՈՐԹ ՄՈՐ ՀԵՔԻԱԹԸ

Կէղնին իրիկմ՝ ու կնիկմ՝։ Էգոնց ախչիկ մը լէ կեր։ Կնիկը կմեռնի, ախչիկ կմնա օրը։ Էգ մարդ նախրորդ կէղնի։ Մարդն է, կնիկ օր կմեռնի, ակարգվի, ուրեն ուրիշ կնիկըմ կրերե։ Խորթ մերն ուրիշի հարգանդեն էղած ախչկա վրեն հ՝ո՞րի կցավա։ Օր կիգա, թասլիմ կէնե նախիրն ախչիկ։ Էդոնց լէ կովըմ կէղնի։

Հ՝ըմն օր կիտա զնախիր ախչկան հ՝առջև ու իլիկըմ ու նուկիմ՝ բուրդ, կասե.—Կտանիս, կմանիս, հ՝իրկուն տավրի հետ կառնիս կիգաս։

Ըդ հաղ ախչիկն է, ջանդարդի կէղնի, հ՝ըմն օր կտանե մանե, հ՝իրկուն կառնե կիգա։

Օր մը լէ կտանե մանե, քարման ակտրի կընկնի։ Կիշնի տեսնա օր պառավըմ կա հ՝ոդի։

Կառնե օր հ՝իգա, պառավն կասե. —Ախչի՜, լաո՜, խիճըմ զարկ իմ գլուխն ու գնա։

Ախչիկն օր կզարկե, կասե.—Ա՜խ, էդի իմ օգորմած մամու գլուխ մանի։

Պառավն կասե.—Լաո՜, հանդե իմ գլուխ խեճ կզարկիս, հընդե դեղին ու սև ջուրն կիգան, կընցնին, զիս չհ՝իմցուս, կարմիր ջուրն օր էկավ՝ հ՝իմցուս, ես քիչըմ կքնիմ։

Ախչիկ պառվու սսածի պես կէնե։ Կիգա սև ջուրն ու դեղին կընչնի, չիմցու, կարմիրն օր կիգա՝ կիմցու։ Կվերցու զէդ ախչիկ թաթխե կարմէր ջրի մեջ, կխորոդըկցու, ճամբե հ՚իգա։

Հ՚իրկուն ախչիկ կքշե զնախիր կիգա։ Խորթ մերն օր ղայխչլ.կ կտեսնա, մաթ կմնա, կհարցու ախչըկաց.—Ախչի՛, իմա՞լ էղավ օր դու հըմլա խորոդըկցար։

Ախչիկն կպատմե զուր գլխու գալածը։

Ըստհաղ զուր հալալ ախչիկ կճամբե. գրշատես ախչիկըմ լէ ուրեն կէղնի։ Կիտա նուկիմ՝ բուրդ ու կասե.—Ախչի՛, նախրի հետ հ՚էսօր դու գնա, բալքիմ դու լէ խորոդըկնաս, դառնաս հ՚իգաս։

Ախչիկ օր կէրթա նախրի հետ, տավրին անկաճ չէնե, կընկնի ուր քարմանի հետ, կէրթան բոլորն էլ կորին։ Քիչըմ կմնա, էդոր քարման լէ կկտրի, կընկնի ցած, զընդանմ՝ կէղնի։ Կիջնի օր բե-րե, պառավն կասե. —Ախչի՛ լաո, խիճըմ զարկ իմ դլուխ, սորա գնա։

Ախչիկն օր խիճ կզարկե, կասե.—Նանե՛, ինչքա՞ն մուոտալ է քու գլուխ։

Պառավ ձեն չհանե։

Կասե.—Ախչի՛, լաո, հանդե զիմ գլուխ կխճիս, կարմիր ջուր կիգա, չըս զարթեցու, դեղինն ու սև օր կիգա՝ կզարթեցուս։ Կիգա կարմիր ջուր՝ չզարթեցու, դեղին ու սևն օր կիգա, կզարթեցու։

Կվերցու զաղջիկ կզարկե հ՚առջին հեղ դեղին ջրի մեջ՝ կդեղնի, վերջ կզարկե սև ջրի մեջ՝ կսևնա, կէղնի ճընդրիկ արապ, մեկ մուութ հ՚էրկինք, մեկ գետին, կըսե.—Դը՛, էլի՛ գնա՛։

Հ՚իրկուն կդառնա կիգա տուն, մամն օր կտեսնա, կկատղի, կուտե զուր միս, զհերս կթափե նախրորդի մեկ կովու վրեն, կը-բռնե մորթե։

Պառավն դինեբ օր հըմալ կէղնի, հ՚առջի հեղ ասեր էր աղ-ջըկան. «Լա՛ո, հընդե քու խորթ մամ օր հերսոդի, մորթե զձըր կով, օր քու մամուց մանցեր էր, էնդոնք զմիս ուտին՝ լեղի է, բըլե քզիկ՝ անուշ։ Զմիս կուտիս, զոսկորներ լէ կըլնաս կաշու մեջ, կտանիս մըսրի գլուխ կհորիս»։

Ախչիկ պառվու ասածի պես կէնե, եր խորթ մամ կիտա զկով մորթել, կբերե զմիս կուտե, զոսկըրներ լէ կըլնա կաշու մեջ, կտա-նի հորե։

Օրըմ հարսնիք կէղնի։ Խորթ մեր զէդ էթում ախչիկ կթողե

տուն, կասե.—Մանցի տուն, շոռ արտսունքով լից զէդա պղինձ, հար հ'իգամ։

Կառնե ղուր սև ախչիկ, կէրթա հարսնեք։

Էթում ախչիկն է, կսևավորի մնա. պառավ էնդիեն կիգա կասե։

— Ախչի՛, հ'ո՞ւրին իս սևավորի նստի։

Ախչիկ կասե.—Չսևավորիմ ի՞նչ էնիմ, իմ մամ էդա հըմլա է ասե։

Պառավն կասե.—Է՞դ է, հոգ մ'էնի։

Կրերե պղինձ կրլնա լիք ջուր, քիչըմ լէ աղ կթալե մեջ։

Վերջ կէրթա հանե զկովու օսկըրներն ու կաշին մըսրի գըլխեն, կտեսնա օր օսկըրներն դարձեր ին հ'ըմեն զուքս ու զինաթ, կաշին լէ՝ հալավ։ Կրերե հագու ախչկան, կառնե կէրթա հարսնիք։

Հարսնիքեն օր կէլնին, կիգան, ախչկա խալխալն ու սոլի թայ կփրթնին օտնեն, կրնկնին հ'աղրրի գռան մեջ։

Լուսուն օր թագավորի սեիսներ կրերին. զձիանք խըմցուն ջուր, կխըռտան փախնին։ Կէրթան թագավորի տզին կասին։ Թագավորի տղեն կիգա, կիշքե օր բան մը կա ջրի մեջ, կհանե, օր խալխալըմ՝ ու սոլի թայըմ։

Կասե.—Էդա խալխալն ու սոլի թայ վիր օտք օր գնաց՝ զէնի կառնիմ։

Քաղաք-քաղքով կփրթնին կիգան, որն օր կջոպվի, մարդու օտք չէրթա։

Կասին.—Էլ մարդ մնա՞ց։

— Մանցեր է պառավն ու ուր ախչիկ։

Պառավ զախչիկ տարեր էր ուր տուն։ Կէրթան բերին զախչիկ, զխալխալն կէձգե ուր օտք, կտեսնա օր օտքով է։

Կասե.—Ես զէդա ախչիկ կառնիմ։

Կրերին պսակին վըր հ'իրարու։

Էդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնեք ձըր մուրազին։